39. ՄԱՐԴ ՈՒ ԿՆԿԱ ՍԵՐԸ ՈՒՐԻՇ ԹԱՎՈՒՐ ԲԱՆ Ա

Մի վախտ Ղլաթ քաղաքում մի մարդ էր կենում՝ անումը Շաղո։ Շաղոն ալեի-մալեի մի տղա ուներ։ Նա ուզեց, որ իրան Հովանտղին իրա սաղ վախտը նշան դնի ու պսակի։ Շաղոն նրան նշան դրեց Շուշան անմավոր մի աղջկա վրա, որին Հովանը շատ վաղուց էր, որ սիրել էր։ Շաղոն Հովանին վե կալավ գնաց Վան քաղաքը, որ հարսանիքի համար զադ-մադ առնի։ Ճամփեն Վանա ծովի վրովն էր։ Ինչ որ պետքն էր առավ, գյամու վրա գրեց ու ճամփա ընկավ։ Դեռ հլա նոր էին հասել ծովի մեջտեղը, որ էնթավուր քամի վե կացավ ծովի վրա ու գյամին ռաթմիշ արեց։ Հովանը ընկավ ծովը, համա Շաղոն՝ նրա հերը մնաց սաղ։

Շաղոն շատ ա մղկտում, էսպես հաղ ա ասում Հովանի բերնից.

Շաղո բարձեր բեռ մի խինա,
Իր Հովանին խարսնիք կենա,
Մեր էրիրական, դու մի էրիրա,
Ձիս խրտ քեզի տարբեգար էրա։

Շաղո բարձեր բեռ մի քասա[1]*,*
Հովան կենա նորափեսա,

---

1 *Ման, տալերք* (Ս. Բ.)։

Մեր էրիրական, գու մի էրիրա,
Զիս խրտ քեզի տարրեդար էրա։

Շատ բարև տարեք իմ մերկան[1],
Քիչ բարև տարեք իմ խերկան[2]
Նովեր ցամքին, էյնիմ իգամ,
Մեր էրիրական գու մի էրիրա,
Զիս խրտ քեզի տարրեդար էրա։

Շուշանը՝ նրա կինը իմանում ա, որ Հովանը խեղդվել ա, յաղու ա խմում, որ մեռնի ու իրա սիրտը իրա նշանածից հետո ուրիշին չտա։

Շուշանը երգում ա.

Տո կիսրիկ, քարե մսրիկ,
Մե էլե Ճամփա իշկա,
Տո՛ տեքրիկ, պաղ ախսրիկ,
Պուտ մ՚ջրիկ, խոքիս էլավ։

Շուշանը էս հաղը կրկրլացնելուց եգ մեռնում ա։
Շուշանի կեսուրը նրա բերանից ասում ա.

Տո՛ մարե, Շուշան գո՞ր ա,
Տո՛ լաո, գացե բեր[3], սալն[4] ա սրտին։
Տո՛ մարե, Շուշան գո՞ր ա,
Տո՛ լաո, գացե ջրի, սալն ա սրտին.
Տո՛ մարե, Շուշան գո՞ր ա,
Տո՛ լաո, գացե շրի, սալն ա սրտին.
Տո՛ մարե, Շուշան գո՞ր ա,
Տո՛ լաո, գացե արտը, սալն ա սրտին։

Շաղոն, Շուշանը ու նրա կեսուրը մինչև հիմա թաղած կան Վանա ծովի ղրաղին, մի տեղ ու վրեն քար կանգնեցրած, մարդիկ գալիս են ուխտ։

---

1 Մորը (Ս. Բ.)։
2 Հորը (Ս. Բ.)։
3 Գրառման ձեռագրում բանահավաքը բացատրել է սուրու, մինչդեռ նշանակում է ոչխարի կիթի վայրը (Ս. Կ.)։
4 Քար (Ս. Բ.)։